



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 201/39 « 30 10 » 2019թ

ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ(ՆԵՐ) ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ֆիզիկական և զգայարանների խանգարումներով հաշմանդամ ուսանողներին աջակցելու նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետով՝

հրամայում եմ՝

1. Սահմանել, որ

ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ս.թ. հոկտեմբերի 10-ի №187/20 հրամանը լրացնել «դ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հեռակա ուսուցման համակարգում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող տեսողական և լսողական զգայարանների խանգարումներով պայմանավորված հաշմանդամ ուսանողներին աջակցելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ֆակուլտետին հատկացնել 160.000 ՀՀ դրամ՝ մեկ ուսանողի հաշվարկով, իսկ հենաշարժողական խանգարումներով պայմանավորված հաշմանդամ ուսանողներին աջակցելու դեպքում՝ 80.000 ՀՀ դրամ՝ մեկ ուսանողի հաշվարկով:

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել ֆակուլտետների ղեկաններին(ինստիտուտների, կենտրոնների տնօրեններին):

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՌԵԿՏՈՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ